Հաստատված է ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. օգոստոսի 27-ի թիվ 8 նիստում
Ռեկտոր Գ. Հակոբյան
«27» օգոստոս 2020թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ (COVID-19) ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ԳՊՀ ուսումնական և աշխատանքային օրվա մեկնարկից առաջ, ինչպես նաև յուրաքանչյուր անգամ ԳՊՀ մուտք գործելիս՝ համալսարանի մասնաշենքերի մուտքերի մոտ ապահովել աշխատակիցների, ուսանողների, այցելուների պարտադիր ջերմաչափումը՝ հեռավար ջերմաչափերով:
2. Բացառել սուր շնչառական վարակների ախտանշաններով (ջերմություն, հազ, հարբուխ, դժվարաշնչություն) աշխատակիցների, ուսանողների, այցելուների մուտքը համալսարան և այդ մասին անհապաղ ահազանգել ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ՝ 8003 համարով:
3. Թույլատրել աշխատակիցների, ուսանողների, այցելուների մուտքը ԳՊՀ մասնաշենքեր միայն դիմակներով:
4. ԳՊՀ ուսումնական և աշխատանքային գործընթացների մասնակիցների միջև պահպանել առնվազն 1.5 մետր սոցիալական հեռավորություն:
5. ԳՊՀ աշխատակիցներին և ուսանողներին ապահովել ձեռքերի մշակման մաշկային հականեխիչներով, ախտահանիչ միջոցներով, անձեռոցիկների պաշարով, փակվող աղբարկղերով:
6. Ապահովել անվտանգ վարվելակաոնների և սանիտարահամաճարակային անվտանգության նորմերի վերաբերյալ պատշաճ իրազեկում, այդ թվում՝ տեսանելի վայրերում պաստառներ փակցնելու, համալսարանի պաշտոնական կայքէջում հրապարակելու միջոցով:
7. Ապահովել ուսումնական գործընթացի իրականացման տարածքում ընդհանուր սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների և հիգիենիկ նորմերի պահպանման նկատմամբ պատշաճ հսկողություն և անհրաժեշտ պարագաների, նյութերի ու հարմարությունների առկայություն:

8. Առկա ձևաչափով ուսումնական և աշխատանքային գործընթացներում ապահովել.

8.1. 20 քառ. մետր տարածքի հաշվով դասընթացի առավելագույնը 10 մասնակցի միաժամանակյա ներկայություն.

8.2. դասասեղանների միջև առնվազն 1.5 մետր հեռավորություն.

8.3. յուրաքանչյուր դասասեղանին 1 մասնակցի խաչաձև նստեցում.

8.4. լսարանների, լաբորատորիաների, աշխատասենյակների բնական օդափոխություն՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ:

9. Աշխատանքային օրվա սկզբում և ավարտին ախտահանել ԳՊՀ բոլոր մասնաշենքերի դռների բռնակները, բազրիքները, սեղանները, ձեռքով հաճախակի հպման մակերեսները (սարքերի մակերեսներ, լույսի անջատիչներ, սարքավորումների բռնակներ, հեռակառավարման վահանակներ, ընդհանուր օգտագործման հեռախոսներ, համակարգիչներ, ստեղնաշարեր և մկնիկներ և այլն), սանհանգույցները, հպման մակերեսները քլորի հիմքով կամ առնվազն 70% սպիրտ պարունակող ախտահանիչ նյութերի կիրառմամբ:

10.ԳՊՀ ֆակուլտետների դեկաններին, կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարներին՝ ապահովել սույն կանոնների և ՀՀ պարետի սահմանած սանիտարահակահամաճարակային անվտանգության, հիգիենայի այլ նորմերի պահպանումը ֆակուլտետներում և համալսարանի կառուցվածքային այլ ստորաբաժանումներում: